ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № ԱՆ-ԴՏՊ-ԴԲՊԱԿ-1-2026

ք.Երևան

Առողջապահության նախարարությունը, (այսուհետ՝ Պետական մարմին), ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Վարդանուշ Գրիգորյանի, որը գործում է Պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ԱՆ «Դեղերի և բժշկական պարագաների ապահովման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Արծվիկ Բալոյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 1910-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում)՝ «Դեղապահում» ծրագրի ապահովման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է 2026 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի 1188 «Դեղապահովում» ծրագրի 11001 «Մարդասիրական օգնության կարգով ստացվող դեղերի և դեղագործական արտադրանքի ստացման՝ մաքսազերծման և բաշխման ծառայություններ» միջոցառման (Ծրագրի միջոցառում) իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել՝ մինչև 182,400,000.0 (մեկ հարյուր ութսուներկու միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ գումար, այդ թվում՝ 30,399,999.9 ՀՀ դրամ ավելացված արժեքի հարկի գումար, պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո հինգ աշխատանքային օրում, առաջին ամսվա համար ներկայացրած վճարման հայտի հիման վրա, համաձայն վճարման ժամանակացույցի, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագրի միջոցառումն իրականացնել Որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Կազմակերպության կողմից իրականացվելիք Ծրագրի միջոցառումը և դրա ծառայությունների ու հետազոտությունների ցանկը ներկայացված է սույն պայմանագրի Հավելված № 1-ում, վճարման ժամանակացույցը՝ Հավելված № 2-ում (կցվում են Excel ֆայլով):

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. Որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների

անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. Առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները։

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. Պահանջել ընդունելու իրականացված միջոցառման արդյունքի մասին իր կողմից ներկայացրած հաշվետվությունը, համաձայն Պետական մարմնի կողմից վճարած գումարի դիմաց սույն պայմանագրի 1.3 կետում նշված հաշվետվության ձևով.

2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2. Իրականացնել Ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.3. Իրականացված Ծրագրի միջոցառման մասին Պայմանագրի 2.4.4 կետում նշված հաշվետվության վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել, դրանք ստանալու օրվանից մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվության համաձայն, իրականացված միջոցառումը համապատասխանում է Ծրագրի միջոցառման և Պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, Պետական մարմինը

հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում Պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. Պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել՝ միջոցառումների իրականացման մասին Պայմանագրի Հավելված **2**-ով հաստատված Ծրագրի միջոցառման աշխատանքային պլանի կատարողական ամփոփ հաշվետվություն՝ հաշվետվու տարվա ավարտից հետո, ոչ ուշ քան **5**-րդ աշխատանքային օրը:

2.4.6. Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից **5** աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.7. Պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունը չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.8. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.9. Պայմանագրի Ծրագրի միջոցառումների տարեկան արդյունքները Պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո, այդ միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած

տնտեսումները վերադարձնելու պետական բյուջե, մինչև սույն պայմանագրի ժամկետի ավարտը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը Ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի **1** տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

5. Պայմանագրի գործողության ժամկետը

5.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցություն (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

7.2. Պայմանագիրը կազմված է 5 (հինգ) էջից, կնքվում է երկու օրինակից հայերեն լեզվով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Պետական մարմին՝	**Կազմակերպություն՝**
Առողջապահության նախարարություն	ԱՆ «Դեղերի և բժշկական պարագաների ապահովման ազգային կենտրոն» ՊՈԱԿ,
Ք.Երևան,Կառավարական շենք 3	Ք. Երևան, Տիտոգրադյան 14/10
Ֆինանսների նախարարության Կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն	Ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն
Հ/Հ 900011105138	Հ/Հ 900018002593
ՀՎՀՀ 02507171	ՀՎՀՀ 02508003
Առողջապահության նախարարության գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
GRIGORYAN VARDANUSH 6802780100 Digitally signed by GRIGORYAN VARDANUSH 6802780100 DN: cn=GRIGORYAN VARDANUSH 6802780100, c=AM Date: 2026.01.26 12:20:24 +04'00' ____________ Վարդանուշ Գրիգորյան	____________ Արծվիկ Բալոյան
(ստորագրություն)	(ստորագրություն)

Digitally signed by BALOYAN ARTSVIK 8011810553
Date: 2026.01.21 16:25:47 AMT